Լուտովիկոս սկսաւ յամի Տեառն ՊԺ. ինքնակալեալ ամս ԻԷ: Որդի գոլով Գառլոսի՝ սա Բ. եղբարս ունէր, մինն՝ թագաւորեալ Ալամանաց, և միւսն՝ Սպանիացւոց. և կացեալ բարւոք քաղաքավարութեամբ՝ հանգեաւ 'ի Տէր: Յաւուրս սորա՝ ասեն՝ ոմանք բերել զմարմին աւետարանչին Մարկոսի յԱղեկսանդրիոյ 'ի Վենետիկ քաղաք, և ամփոփեալ 'ի ներքոյ ասեն՝ 'ի յունվարի ԼԱ:

Լոտորիոս՝ որդի Լուտովիկոսի՝ սկսաւ յամի Տեառն ՊԼԷ. ինքնակալեալ ամս ԻԷ: Սորա երեք որդիքն ոխացեալ ընդ իրեարս՝ շատ պատերազմեցան զօրքն Ֆըռանցւոց. զոր լուեալ տաճկացն՝ որք յԱփրիկէ, անցին զծովն, և առին զՀռոմ, և քակեցին զեկեղեցին Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի. և դարձեալ գնացին յաշխարհըն իւրեանց. բայց 'ի ծովն ընկղմեցան ամենեքեան, և ոչ ոք փրկեցաւ 'ի նոցանէ:

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան